

Երջանի արմատական բնակիչներն են.			
Լուս. հայեր՝	8791 ար.	7670 իգ.	իմիասին՝
Երա թուրքեր	11804 ար.	9845 իգ.	»
Մահմեդ. քրդեր	462 ար.	357 իգ.	»
Հնդամէնը՝	21057 ար.	17872 իգ.	իմիասին՝
Իսկ ժամանակաւորապէս ապրում են.			38929.
Լուս. հայեր	20 ար.	21 իգ.	իմիասին՝
Պրովոլաւ Ռումաներ	17 ար.	»	»
Պրովոլաւ վրացի	3 ար.	2 իգ.	»
Երա թուրքեր	170 ար.	138 իգ.	»
Մահմեդ. քրդեր	118 ար.	103 իգ.	»
Հնդամէնը	328 ար.	264 իգ.	իմիասին՝
			592.

Բնական զիրքով Դարալազեազր բաժանում է Արփաշայ գետի և սրա հիւսիսային ու հարաւային վտակների հովիաների, Աւելի յարատն համարելով այս բնական բաժանմունքը, մննք կը նկարագրենք Դարալազեազր համաձայն այդ հովիաների և ոչ թէ քաղաքական բաժանման, որ, համեմատաբար, շատ փոփոխական է:

ԱՐՓԱԶԱՑԻ ՀԱՎԻՏ

Արփաշայի հովիացը, որ ձգում է համանումն զետի ուղղութեամբ, սկսում է Ալլահօքի բարձրաւանդակի հարաւային կողմից և շրջապատուելով Կոնգուրո-Ալանգէղի ու Հիւսիսային Դարալազեազրի լեռնազդթաներով, ձգում է զէպի հարաւա, և ապա Զայ-քեանտ զիւղի մօտ ուղղում է զէպի արևմտահրեւրս՝ հեղուերով Հարաւային Դարալազեազրի լեռնազդթայից, բայց յատոյ Այսր զիւղի մօտ փոքր ինչ ընդարձակուելով ձգում է զրիթէ ուղղի զէպի արևմտար և ապա կրկին սկզբուելով ժայռապատ ափերի մէջ (Ծնդուլի ձոր) Արփա զիւղի մօտ ծուռում է զէպի հարաւա և համանում մինչև Շարուրի սահմանը։ Հոգտի հիւսիսային ծայրում, Արփաշայի ակունքի մօտ, ուր բնութիւնը չափազանց զեղեցիկ է և բուսականութիւնը շատ հարուստ, զետեղուած է, կարծես, որպէս մի հակագրութիւն, թրքական մի կեղասու և աղքատիկ զիւղ, հնտիսու անունով։ Սակայն սրա մօտի աւերակ զիւղատեղին, հեկեղեցու հիմնապատերը, երեք զերեզմանատունն արդէն եղծուած տապանաքարերով ու խաչարձաններով զիւղում են, որ մի ժամանակ այդ մինչնոյն տեղում աւելի լաւ շինութիւններ և աւելի ինտ բնակութիւն են եղել, հաւանական է, որ այդտեղ է գտնուել Օրբելեանի յիշած Ձերմուկ զիւղը, որի անուան թարգմանութիւնն է կրում և այժմեանը, անշուշտ մօտակայ չերմուկի

պատճառով, Բնակիչները շիա թուրքեր են, ընդամենը 27 տուն, 110 ար. 109 իգ. իմիասին՝ 219 հոգի:

Իսախոսությա հազիւ 2 վերստ գէպի արևմտահարաւ, այնուեղ, ուր Մուրադ-թափա լեռից հոսող բաղմաթիւ ազրիւրների ջուրը միախառնուելով մի սքանչելի ջրընկէց է կազմում, կանգնած է Ծէյրանլու դարձեալ թրբարնակ գիւղը, որ հայր Ալիշանի կարծիքով հիմ Անկանը կամ Անգույք գիւղը պատճեն թուրքերէն ծէյրեան հոսումն է նշանակում¹⁾, Բնակիչները շիա թուրքեր են, 28 տուն, 80 ար. 48 իգ. իմիասին՝ 128 հոգի:

Ծէյրանլուի հանդէպ, գէպի արևելք, մօս չորս վերստ հեռու, մի բարձրաւանգակի վրայ զետեղուած է Զիրուկ թրբարնակ գիւղը. Մրա մօս կայ մի ընդարձակ հիմ զերեզմանատուն, մի կիսուելք, հասարակ եկեղեցի, խաչքարեր և այլն Բնակիչները 48 տուն են, 197 ար. 159 իգ. իմիասին՝ 356 հոգի:

Զիրուկից գէպի արևմտահարաւ, մի վերստ հեռու գտնում է Բիլազ գիւղը, որ հիմ Պրակը-ը պիտի լինի: Մրա մօս ես կայ հիմ գերեզմանատուն և եկեղեցու աւերակ, Բնակիչները շիա թուրքեր են՝ 64 տուն, 256 ար. 217 իգ. իմիասին՝ 473 հոգի:

Բիլազից գէպի հարաւ արևմտակոք, չորս վերստ հեռու, Արփաչայի ձախ տիբին տեղաւորուած է Ղուչշի-Բիլազ գիւղը, որ հայերից յաճախ կեչիթ է կոչում, հիմ Կեշուտ անունով. Գիւղի արևմտեան կողմում, Արփաչայի ափին, կայ մի հիմ զերեզմանատուն, մօսը աւերակ եկեղեցի: Խաչքարերի մէջ ալքի է ընկնում մինը, որ և արշին բարձրութեան և 1½ արշին լայնութեան քար է, մի անազին անտաշ քարէ պատուանդանի վրայ կանգնեցրած: Խաչքարի գէպի արևելք դարձրած երեսին քանդակուած է մի մեծ խաչ, խակ յետնում գրուած է. ի թագաւորութեան վասակա Տը Բարգէն որդի Սիւնեաց իշխաննին Հայոց թվականութեան որ Յլօն²⁾ էր ես դասիթ կանգնեցի զիսաշ վասն հոգւյ... յաղալթս յիշեցէք. Դիւղի արևելեան ծայրութե, միայն առանց արձանագրութեան:

Այստեղից փոքր ինչ հեռու, Արփաչայի վրայ ձգուած է եղել մի կամուրջ, որի միայն երկու ծայրի պատերն են Յեռև:

Դիւղի արևելեան կողմից հոսում է Շարուրի կալուածատէր Շանգիրէի առուն, որ գիւղից մօս 10 վերստ հեռու, Բազարչայ

¹⁾ Ի Միասին եր. 103

²⁾ 335—555. Գրիւկոն Բ.

գետից է առնուած և Դուշի-Բիլաք գիւղից փոքր մնչ ներքի թափում է Արփաչայի մէջ:

Դիւղի մէջ, մի ժայռի միջից, հոսում է հանքային ածխա-թթու—երկաթային սառն ջուր:

Դիւղի մէջ բացի մի հասարակ եկեղեցոց ուրիշ հետաքր-քրական բան չկայ, կիման բաւական ցուրտ է, այնպէս որ ցան-քերն սկսում են մայիսի մէկից և աշնանացան տեղի չի ունենում, որովհետեւ եօթնամսեայ երկարատեւ ձմեռ թոյլ չի տայիս: Բացի սրանից՝ ամսոն էլ Նըսըր լեռուից շարունակ փուում է առն, զօրեղ քամի: Բնակիչները 45 տարի առաջ գաղթել են Զանգեզուրի զա-ւորի Ուզ (Խոյի գաղթականներ) և Նախիջևանի Ազնարերդ (բնիկ-ներ) գիւղերից, ընդամենը 90 տուն են, 412 ար. 376 իու. Խմիա-սին՝ 788 հոգի: Դիմաւորապէս պարապում են անասնապահու-թեամբ և կաթնատնեսութեամբ, որովհետեւ հիանալի արոտատե-ղիներ կան: Շատերն էլ պանդխտում են Բագու և Թիֆլիս՝ աշխատելու նւ որովհետև այդ գիւղի մօտով է անցնում Նախի-ջևանի գաւառը տանող ճանապարհը, և բացի զրանից Ղարաբաղի թափառական թլուրքերը սրա մօտով անցնող Արխաչանի ճանա-պարհը են գալիս անցնում Դարալագեազի հիւսիսային լեռները, ուստի և ամսուր մի առանձին շարժում է տիրում գիւղում, մա-նաւանդ երբ մօտակայ Խոտիսու ջերմուկն էլ շատ եկողներ են լի-նում, ուստի և այս պատճառով գիւղում բացուել են երեք հոթի և մի մանրունքի խանութներ:

Դուշի-Բիլաքից հինգ վերստ գէպի արևմտահարաւ, Նըսըր-գաղից գէպի Արփաչայն իշնող սարանարթի վրայ փուուած է Գնդեվազ գիւղը, որի առաջից, անդնդախոր ձորի մէջով գալար-ւում է Հարիւրամեայ ընկուզենիների և ծիրանիների հովասուն սաղարթներով հովանաւորուած արծաթափայլ Արփաչայը, իւր կուսական, յաւերժ գեղեցիւթեամբ սքանչելի է այս ձորը, որի եզրին ընելուած խոփումածիք ժայռերի խոռոչների ձեղունից վիժուուղ բիւրեղանման ցայտերը խաղալով ժայռի ամէն մի ծեր-պից կենդանութեան գիւղու բոյսերի յուսալից տերեների և արեի կենսատու ճաճանչների հետ՝ ճաճակցում են բնութեան հրապոյ-րով հարբած թռչունների դայլայլիկներ:

Ցիրաւի գեղեցիւթեան մասանի է այս ձորակը՝ որի ակը կազմում է Սոփիա տիկնոջ պարգևած Գնդեվանքը, այժմ գարերի փոշուց փայլը կորցրած:

Չորրի մէջ, նոյն ժայռների ծերպերում կան բաւականաշափ ճզնարաններ, մատուցմներ, որոնց կայցելենք նշանաւոր վանքերը նկարագրելիս, միայն այժմ հիանանք այն ահագին ջրընկեցով,

որ թաւալում է այստեղ անազին բարձրութիւնից, և որ, մանաւանդ, չափազանց գեղեցիկ է գարնան սկզբին, երբ սարահարթի վրայ հարջում են ձեռն շերտերը: Սրանից էլ փոքր ինչ ներքինոյն ժայռի մէջ կայ մի անազին բարայր, ձորի կողմից պատով պատաժ, իսկ սրա հանգէպ, գետի աջ կողմին՝ մի աւերակ ամրոց, որ այժմ Դալարեանդ է կոչւում:

Գնդեվազ զիւզր բաժանուած է երկու առանձին մասի, հայկական և թբրական: Վերջինին մէջ է գանուում հայկական մի հին եկեղեցի ու քարերով շինուած, որի գուն վերայի արձանագրութիւնից երևում է, որ շինել է Պետրոս վարդապետը 1686 թուին: Հայերը սրա հիւսիսային քանդուած մասը վերանորոգելով՝ նոր եկեղեց շինելու հոգսից ազատուել են: Հայկական մասում նշանաւոր է շինուական դաստարանի և միջամտեան գպրոցի բաւական վայելուչ շնչերը, որոնք կասուցուած են նախկին գերեզմանատեղիների վրայ: Հայկական մասում կայ մի ազրիւր, որ բերել են մօս հինգ վերստ հեռաւորութիւնից միայն հայերը, իսկ թուրքերը շին մասնակցել, այլ շարունակուած են ջուր վերցնել ձորի միջի ժայռերից հոսող աղբիւրներից՝ անազին նեղութիւններ կրելով: Բացի դրանից՝ ինչպէս որ 2008 թուին Գնդեվանքի վաճառական հայր Հայր Սարգսը Զենարած գետից (Բագարչայի վուակ) մի առու էր բերել մինչև Գնդեվազ գիւղը, որը, սակայն 1760-ական թուականներին խափանուել էր, այնպէս և 1895 թուին գնդեվազցիները 2000 թ. ծախսելով նոյն Բագարչայից մի առու բերին զիւղը, մեծ մասամբ հին լրանցքը վերանորոգելով:

Բնակիչներից հայերը գաղթել են այստեղ 1866 թ. Կոխշիկից, Խաչիկից և երկու տասն թեշիշ-քեանատից: Ծնդամենը 42 տասն են, 274 ար. 239 իգ. իմիասին՝ 513 հոգի, իսկ թուրքերը աւելի հին են, ընդամենը 25 տասն, 105 ար. 91 իգ. իմիասին՝ 196 հոգի, ուրին զիւղի բռոր բնակիչներն են 67 տասն, 379 ար. 330 իգ. իմիասին՝ 709 հոգի. պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ մեղուապահութեամբ: Գիւղում կայ մի հոթեղէնի և մի մանրունքի խանութ, ինչպէս և 7 լրազար և մի ձեթահանք:

Գնդեվազից գէպի արևմուտք, մօտ 5 վերստ հեռու, Արփաչայի աջ ափին տեղաւորուած է մի փոքրիկ թրքարնակ գիւղ, Աղճա-քեանտ, որ հաւանօրէն էին Ասուարը պիտի լինի: Այստեղ ևս կայ մի աւել եկեղեցի և մի հին, հայկական գերեզմանատուն, Բնակիչները 19 տասն են, 105 ար. 90 իգ. իմիասին՝ 195 հոգի, Պարապում են բացի երկրագործութիւնից և անասնապահութիւնից նաև ծիրանի մշակութեամբ:

Գնդեվանքից 3 վերստ հեռու, գէսի հարաւ արեկը, գանւում
է ԿԸՄԸԸՆԸ կամ ԱԸԸԸՆԸ գիւղը, 13 տուն թուրք բնակչով, 56 ար.
48 իգ. իմիասին՝ 104 հոգի. Սրանից ներքն կայ մի ընդարձակ
հին գերեզմանատուն, մի քիչ էլ հարաւ, Արփաշայի աջ ափին
տեղաւորուած է Մ'ամարզակ կամ Մ'ամարզա-կշշախը փոքրին
գիւղը, 12 տուն թուրք բնակչով, որից 57 ար. 54 իգ. իմիասին՝
111 հոգի.

Այսանդից էլ մօտ հինգ վերստ հեռու, գանւում է Կոյնոյէս
աննշան Զայրթանտ թրքարնակ գիւղը, 12 տուն բնակչով, 78 ար.
63 իգ. իմիասին՝ 141 հոգի.

Աննշան է նաև գրեթէ Կոյնարն հետաւորութեան վրայ զրտ-
նուող Ղայալու գիւղը, որ ունի 27 տուն թուրք բնակիչներ, 130
ար. 117 իգ. իմիասին՝ 247 հոգի.

Այստեղից էլ մօտ հինգ վերստ հեռու գանւում է Սոյլանը,
ուր բնակւում է միայն մի տուն, Փոքրցի Զամփուլատեանը,
վճարելով եօթ տան հարկ, որովհետև միւս վեց տունը գաղթել են-
ուրիշ տեղեր և իրենց բոլոր հոգերը սրանց թողել. Այստեղ ձգուած
են մի քանի հիմնալի այգիներ, անկուած են մի բանի շարք ու-
ռենիներ ու բարդիներ. պահուում են բաւականաչափ անասաւն-
ներ և ձիերի ջոկեր. Այստեղից մօտ կէս վերստ գէտի հիւսիս
մեռու են հին Սոյլան գիւղի աւերակները, մի եկեղեցի և միքանի
խաչարեր. վերջիններին վրայ կան արձանագրութիւններ մէջ.
զարից, Այստեղից էլ փաքը ինչ արենեանիւսիս, Արփաշայի աջ
ափին, մի ապառաժու բլրի վրայ նկատելի են մի ամրոցի պա-
րիսպներն ու գարզասը. Ոչ մի յիշատակութիւն չկայ այս ամ-
րոցի մասին և ոչ էլ որևէ է արձանագրութիւն. Բնրդատեղը կոչ-
ւում է Ղալայ-չայ.

Այստեղից ես մինչև Մող, մօտ ութ վերստ տարածութեան
վրայ ընկած են Համլու, Տաշալտի և Զաղատայ թրքարնակ գիւ-
ղերը, որոնց մօտ ես ոչ մի հետաքրքրական բան չկայ, բացի
Տաշալտիի մօտ զանուուղ հին կամուրջը, որ այժմ վերանորոգուած
է. Համլուն ունի 7 տուն, 13 ար. 10 իգ. իմիասին՝ 23 հոգի. Տա-
շալտին 11 տուն, 21 ար. 19 իգ. իմիասին՝ 40 հոգի, բոլորն էլ
վարակուած բորսուութեան ախտով. Զաղատան ունի 19 տուն, 57
ար. 46 իգ. իմիասին՝ 103 հոգի.

Զաղատայի մօտից սկսում են Մող քաղաքի աւերակները,
որ ձգուում են Արփաշայի ուղղութեամբ մօտ երեք վերստ, մինչև
այժմեան համանուն գիւղը. Ակզրում հովիտը նեղ է, բայց հետզ-
հետէ լայնանում է և արևմտեան մասում մի բաւական ընդարձակ
դաշտավայր կազմում. Այս մասում, ուր զետեղուած է այժմեան

համանուն զիւղը, գետի ափին, բարձրանում է մի բլուր, որի վրայ նկատելի են մի աւերակ և կեղեցու հիմնապատեր, երկու կոստուուած խաչքար Զի (1471) և Զի (1483) թուականներով և Արքաջայի ապառաժուս եղբին՝ պարսպի հետքեր, Ամբողջ տարածութիւնը պատաժ է խանձողի շեղջակոյակերով, որոնց մէջ նկատելի են շինութիւնների հետքեր, փողոցներ, հրապարակներ, Երեք փոքրիկ հրապարակներ պատաժ են մոխրով. ես պեղել տուի այս հրապարակները մօտ չորս արշին խորութեան, գուրս էին դայիս կատէ և յաղնապահէ ամանների կտորներ, վէզ, սոկորներ և այլն Սրբմանան կողմում հսում է մի յորդ աղբիւր, որ զիւղացիների տակով, շատ անգամ գուրս է բերում կատէ ամաններ և բրոնզէ ապարանջաններ ու ճարմանջներ. Այս տարածութեան վրայ են դանուում բրոնզի դարի բաւականաշափ դերեզմաններ, որոնցից իննը ես բաց անել տուի¹⁾.

Յիշենք, որ այս քաղաքից է եղել այն աւանդական կինը, որ պանել է Ստեփանոս եպիսկոպոսին և այս պատճառով երկրաշարժ է տեղի ունեցել և աւերել այս քաղաքը, և որ այս ժամանակ անդանդից և օգի միջից լսելի է եղել մարդկային մի ձայն, որ կանչել է. «Փայ ձոր, վայ ձոր» և այս պատճառով էլ երկիրը կոչուել է «Վայոց ձոր»²⁾.

Այժմեան Մող զիւղը պատաժ է ծիրանի և այլ ծառերով ու խաղողի այգիներով, Բնակիչները 12 տուն են, բոլորն էլ թուրքեր, 74 ար. 58 իշ. իմիսախին՝ 132 հոգի.

Մողից մօտ հինգ վերստ ներքէ գտնում է Այծարը, որ տեղաւորուած է Արքաջայի ձախ ափին, լեռներով պատաժ մի հարթ վայրում. Գիւղի միջով հսում է մի առուակ, որ սկզբն է առնում Վարդարուր լեռնից. սրա ջուրը թէպէտ և շատ լաւ է, միայն սրա մէջ է թափուում Ենկիջայի և Ղուրզզուլաղի ճանապարհի վրայ գտնուող ՔՊաւա կամ ՔՊոսի ջուրը կոչուած ածխաթթու-ալկալեան ջուրը և որովհեաւ զիւղում աղբիւրներ չկան և միակ, զործածելի ջուրը այս է, այս պատճառով էլ բնակիչները բաւական վնասուում են: Կիրման էլ տաք է և խեղզող, որովհեան շրջապատող լեռները թոյլ չեն տալիս քամու հսունքներն անցնելու: Ամառը չալթուկի շնակներից բարձրացած գոլորշիներն ամսից նման կանցնում են զիւղի վրայ: Մոծակիներն ու ճանճերն էլ անթիւ են ու անհամար: Հողը սաստիկ արգաւանդ է և ամբողջովին պատաժ այգիներով և չալթուկի, բամբակի, ցորենի ու գարու արտերով: Գիւղում ոչ մի ճառութիւն չկայ, միայն զիւղից

¹⁾ Են պատճիս ուսութեան մէջ:

²⁾ Անգ.

զուրս, գէպի արևելահարաւ, ժայռուս լերան գագաթին մնում են մի ամրոցի և մի եկեղեցու աւերակները։ Տեղացիները եկեղեցուն շահապատ են կոչում։

Այեարը նախկին Ազարակի ձոր զիւզն է, որի մասին Ստեփանոս Օրբելեանն ասում է, թէ Նորագանից առաջնորդ չնորհագորդ Տէր Ստեփանոսը խնդրեց Եւտկուզ ամիրայից Ազարակի ձոր զիւզը, և նա քաղցր կամքով այն ես ընծայեց սուրբ եկեղեցուն և վանքին պատկանող բոլոր տեղերը՝ հողը, լուրը, այզին, զիւզը և ազարակը և զգիրդն իսկ Անապատայց ազատ կացոյց աշխարհական հարկերից¹⁾։ Ստեփան մի առ ժամանակից այս զիւզը վանքից խլել են, աւասի և Տէր Ստեփին առաջնորդի օրով Կոպարիս Օրբելեանը ցոյց է առաջն սպասարար Զաքարէին աթարէկ Ելտկուզի տուած հրովարտակը և խնդրում է վերահաստատել Զաքարէ սպասարարը իւր ձեռքով գրում է, թէ գարձրի Ազարակի ձոր գիւղը Նորագանիցն ամեն տեսակ հարկից ազատելով²⁾, հայոց մի կամ գրկչական 1211 թուին։

Այեարի բնակիչները գաղթած են Սալմաստի Շիտան և Ղարավերան զիւզերից, Թուլակազմ, տպէտ, ծոյլ և աղքատ մարդիկ են, ընդամենը 47 տուն, 107 ար. և 163 իգ. իմբասին՝ 330 հոգի։

Այեարից փոքր ինչ ներքն գտնուում է Դադալի կոչուած կամուրջը Արփաչայի վրայ, իսկ սրանից էլ փոքր ինչ ցածր Հըզըլ-ղըշլաղ թրքարնակ, աննշան, նոր հիմնուած զիւղը, իսկ սրանից էլ 2 վերսա ներքն Ծրդէլ զիւղը, որ հին երգէլ զիւղը պիտի լինի։ Դիւղը զետեղուուած է Արփաչայի ձախ ափին և բաւական զեղեցիկ տեսք ունի։ Բնակիչները թուրքեր են, 43 տուն, 187 ար. 166 իգ. իմբասին՝ 353 հոգի։

Գիւղի արևելահարաւային կողմում ձգւում է մի ձոր, որ կոչուում է Մառմառ դարասի, (Մարմարիսն-ձոր), որովհետեւ սրա միջով հոսող աղբիւրի բերած հճափայլ խիճը տեղացի թուրքերին մարմարին է թւում։ Այս ձորուն երեք կողմից ուղղահայեաց և միանգամայն անմատչելի բարձրանուում է մի քարարլուր, որի վրայ կայ մի հին ամրոցի տեկրակ, հիւսիսային կողմը կրաշաղակ պարիսպ, մի զարպատով, ներսում մի կրաշաղախ ջրամբար, աըների հիմնապատեր և կոտրատուած խաչքարեր, միքանիսը ժղովարից։ Բերդի ստորոտում ես կան աների հիմնապատեր և գերեզմանաքարեր։

Այսահից էլ փոքր ինչ բարձր՝ մի ձորակի մէջ գտնուում է

¹⁾ Ս. Օրբ. Բ. համ. դլ. 77.

²⁾ Ս. Օրբ. Բ. դլ. 76.

ՄՇՀՋՐԷ կամ ՄՇՈՂՋՐՈՎ աւերակ զիւղը, իսկ սըանից դէպի արևմուռք երդիշ-պաշի երկարածիր լերան ստորոտում Դանճավկ կամ Քեան-ճակ գիւղատեղին:

Երդիշից մինչև Արփա զիւղը, մօտ ութ վերսա հովիտը բաւականաշատ նեղանուումէ, և Արփաչայի երկու կողմին բարձրա-նուում են անօպին ժայռեր, շատ գեղեցիկ կիրճ կազմելով, որի մի-ջավ որուանդուում հուսում է զետը: Այս ձորը կոչուում է Շնդուլի ծոր: Այստեղ, զետի աջ ափին, կայ մի կիսաւեր եկեղեցի, շուրջը տան հիմնապատեր և մի քանի գերեզման: Եկեղեցին կոչուում է Մծա-խաչ, որովհետեւ ստականակաթ կանայք ուխտ են զալիս եկեղեցու խաչքարին՝ հայցելու, որ իրենց սովորքի կաթը աւելացնի:

Արփա զիւղի մօտ Շնդուլի ձորին միանուում է Ռէփի կոչուած ձորը, որ տանուում է դէպի Ամաղու հոչակաւոր վանքը:

Արփան տեղաւորուած է Արփաչայի ձափ ափին, մի փոքրիկ հարթութեան վրայ, բաւական ցածր զիւղք ունի, ուստի և կլիման ստատիկ տաք է, ու առատութեամբ բաւացնուում է բամբակ, արփեցիների հարստութեան ամենագլխաւոր աղբիւրը: Այժմեան զիւ-ղուում հետաքրքրական ոչինչ չկայ, նոյն իսկ փոքրը ի շատէ զեղեցիկ շնչիք հնայելով որ այստեղ է զանուում շինական գատարանը և հասարակութեան պետական, միզասեան գողրոցը: Բնակիչները բնիք են, որ մէկ ու կէս գար տառջ զաղթել են մօտակայ հին Արփա զիւղից: Ընդամենը 72 տուն են, 295 ար. 259 իդ. ի միա-սին՝ 554 հոգի: Բացի բամբակի մշակութիւնից, պարապուում են նաև այգեպանութեամբ, երկրագործութեամբ և անասնապահու-թեամբ: Ամբողջ Դարալագեազում Արփայի զինին համարուում է ամենալաւը, բնշղէս և իրենք, արփեցիք, համարուում են ամենալաւ կոնծողներն ու հէշասաէրը:

Գիւղը կալուածատիրական է, պատկանուում է Զիվայի և Խւխա-րի Դանճիկի տէր Վեցիրով թուրք բէկերին: Գիւղում կայ երկու ճոթի խանութ, բամբակ մաքրելու գործարան, և չորս ջրաղաց:

Արփա զիւղից փոքր ինչ բարձր, նրա հարաւա արևելեան կողմուում, ապառաժուում ժայռերի ստորոտուում եղել է հին Արփա զիւղը, որից միայն տների հիմնաքարերն ու մի ձիթահանքի քաը են մնացել: Արփա հանդէպ, մի բլրակի վրայ կանգնած է մի գեղեցիկ, կիսակործան եկեղեցի, շրջապատուած հին և նոր գերեզմաններով, որովհետեւ այժմեան արփեցիներն էլ իրենց ննջեցեալներին այս գերեզմանատանն են թաղուու: Աւշագրաւ է նաև այստեղից դէպի հիւսիս, Արփաչայի աջ ափին գետ և մասցած հին կամուրջի որո-բառաշ, մոխրագոյն քարերից շինած երեք ուները, որոնց վերայ երբեմն բոլորելիս են եղել երեք կամարներ: Այս կամուրջը այժմ

զետից փարոք ինչ հեռու է մասցիւ որովհետեւ վերջինն ունի ձայնը և թերութել, ուշակայով ճիխ Արքայի բլուրը:

Այս կամացը շինել է Նորագանքը Սարգիս Խովհանոսը Տարային իշխանի հրամանով մի դր. զարդ յիշութեալ),

Հին Արքայից փաքք ինչ հեռու, դէպի տրեելք, մի քարարի ստորոտում, սրտեղից հոսում է Դարա-սու (Ան Տուր) կոչուած յօրդ աղքիւրը, կան ո. Գրիգոր և Մարիամ Նահատակների ուխտատեղիները, ցրջապատւած առըրք հոմարուած Փշատի և այլ ծառերոց ։

Կամուրջից դեպի արևմտյանք էլ, Վարդապետի հող կոչուած տաղի մօս, մի փոքրիկ բլրակի վրայ կանգնած է մի որմեաժակ խաչքար, 1303 թուի արձանագրութեամբ:

Հին Արքայի բնակիչները, Օրբելիաններից տռաջ եղել են Ասութամարեան զարմերը, որ ով հին ժամանակաց բնակեալ էին Արքայ գիւղն։ Այս զարմի պայազաւոր վասակ Խաչենեցու զանութեամբ իւլց զարտիկիներից Հրատեկայ բերդը, Սրանը նաև Նորագանների շինութեան ժամանակ տուին ոյիւրեանց հայրենիացն զեակեկիքարոյ այդուցն զվերին բաժին։ Հին Արքայում Օրբելան Տորսային իշխաննը շինուել էր իւր համար զարպաս, և այս տեղ էլ 1290 թուրին վախճանուել է, և տարուել թազուել է Նորագաններում Սրա ժամանակ Արքայում բնակւում էր նաև Մաւենեան Կապաննեցի իշխանների պայազաւ Զուրիի օրդի Ամբրան, որ Տարայինից 4000 դրամի գնեւով Արքայում Աղթայ այդին նուիրեց Նորագաններին⁴։ Ժէ. զարում Արքայի բնակիչների մի մասը Պարսկաստան գերի տարուեց և սրանցից մինչ՝ Դրիգոր, պարթևանասակ և յաղթանգամ, և սրտիւն արի, բանիւք և խելօք, հանճարեղ, և հաւատովն և սիրովն Թրիստոսի հաստատ և իշերմադոյն բնակւում էր Փարիսու զաւառի Խոյիկան պիւրը և բացայե-

²⁾ Wm. Oppenheim R. Survey p. 92. *Ibida* 176.

2) Անանդութիւնն առում է, թէ մի խումբ թուրքեր ստիպում են Գրիգորին առաջնորդել իրենց գեղի Արքա՝ որպէսզի կոտորեն և թալանեն: Սա նրանց երկար ման է ածում և գիշերը քերում Արքա գիւղի ապառաժու գագաթի վրայ մի կածան ցոյց տալիս, որ իշխան, ինքն էլ առաջ է անցնում և մի ծերպում թափնում, նրանց ձայն տալիս, որ գան Թուրքերից շատերը զորում են Ժայռից և մեռնում, իսկ մթնուերը իմանալով Գրիգորի խարդախութեն՝ մօտենում են, վայր գրում նրան և իրենքն փախչում: Այսպիսով գիւղը աղաւանում է թուրքերի յարձակումից և երախտապարտ գիւղացիները թաղում են նրան իւր ընկած աեղը ու մասում կանգնում վերան:

²⁾ Ալլան, Ախտկան եր. 153.

բում էր իւր գերեկիցներին չթուրանալ իրենց հաւատի մէջ, մուլուռելով Շահ-Արտօի արքանեակիների յորդորներից. Նոյն իսկ միքանի անգամ նա ներկայացաւ Շահ-Արտօին և թախանձանքով դրաւոր հրաման ստացաւ նրանից ազատօրէն գաւանելու քրիստոնէոթիւնը. Սակայն նախանձորդ թուրքերից ամրաստանուեց և զատապարտուեց ուրացութեան կամ մահուան: Վերջինս ընտրելով նահատակուեց 1621 թուբին¹⁾:

Այս դիւզից է եղել նաև Ռաշիկի դուստր Ազիզ, որ ամրաստանուել է թէ ամուսնութիւնից առաջ որդի է ունեցել իւր նշանած Միքանից, Նախիջնանի Մուրազ խանը առաջարկել է ուրացութիւն կամ մաս և երր Ազիզը չէ ուրացել, նրան պարանով կամել են քաղաքից զուրս՝ մի մինարէից և նա ընկել մեռել է: Քաղաքի քրիստոնեաները վերցրել են նրան ու պատուով թազել 1679 թուբին²⁾:

Արփայից մօտ ութ վերսու ներքե, Արփաշայի աջ ափին, փուուած է վերին կամ ինխարի Տանճիկ թրքարնակ գիւղը. Այստեղ ուշագրաւ ոչինչ չկայ, միայն սրանից փոքր ինչ արևմուաք, մի բարձր քարածայափ տակ գտնուում են հին Տանճիկ գիւղի աւերակները. Թէպէտ և ոչ մի արձանագրութիւն չկայ այս աւերակների մէջ և ոչ չէ մի որեւէ պատմական յիշատակութիւն, սակայն Նորավանքի զանգակատան արևմտեան զրան արձանագրութիւնը վկայում է, որ 1303 թուբին Շահնշահրատ որդի Տանաղուին ոչ ունելով զաւակ յերկրի... տուի յիմ հոգալ հայրենեաց զՑանճիկ իւր սահմանաւըն և այգուանի ի Նորավանքաւ:

Տանճիկից գէպի արեկեանարաւ, գետի ձախ ափին բարձրանուում են միմեանցից փաքր ինչ հեռու երկու քարաժայենք, որոնց վրայ կան ջրամբար և բերդի աւերակներ, պարիսպ, կրաշաղախ սենեակներ: Մրանցից բարձրը այժմ կոչւում է Վէջսալլի բերդ, իսկ ցածրը՝ իւշ կարդաց կալասի (երեք եղբայրների բերդ), իսկ որտեղ պատմական անունը յայտնի չէ: Այս բերդերի մօտ է գտնուում մի ծծմբանամ ազրիւր:

Դիւզից փոքր ինչ հեռու աարածուում է Օստէր դաշտը, ուր կայ մի ուխտատեղի՝ կրակից մնացած մի մնծ քար, որ հաւասարապէս պաշտուում է թէ հայերից և թէ թուրքերից: Աւանդաբար պատմուում է, թէ այդտեղ է չարչարուել Յոր երանելին, և այդտեղ տարածուած քարցած ժժմակները նրա վէրքերից թափուած մինուներն են:

¹⁾ Առքել Դաւթիւնից զ. ժ.

²⁾ Զարգարիս ուշիստաց. Բ. յիշ. Ալիշան. Միստիկն եր. 184.

Արքի Տաճարիկի բնակիցները ընդումէնը 61 տուն են, 144
ար. 126 իգ. ի միասին 270 հոգի։

Արքին Տանձիկից ներքև, գետի աջ ափին գտնուում են ներքին Տանձիկ և Դաւա-օլան աննշան գիւղերը, առաջինը ունի 18 տուն թուրք բնակիչ. 57 ար. 40 իդ. ի միասին 97 հոգի, իսկ երկրորդը՝ 4 տուն, 17 ար. 16 իդ. ի միասին 33 հոգի նոյնական թուրք:

Դաւա-օլանի հանգէպ, զէպի արհեկը տարածւում է մի դաշտ, որ կոչում է Սանդիքազան (ուղղաշար), ուր կայ մի երկարաձիգ պատ, ուր աւանդութեան ասելով, Նազիր-շահը կանգնել է և զօրքերի շարքերը համարել: Նոյն շահի համար պատմում են, թէ հանգստացել է այն քառանկիննի պատի վրայ, որ շնուռած է Սանդիքանից մօտ 4 վերսա զէպի հիւսիս, և որ այժմ էլ կոչում է Շահ-թախտի: Սրանից հայի կէս վերսա բարձր, զէպի հիւսիս, Արփաշայի աշ ափին, բաց մոխրագոյն ժայռի մէջ ձգում է մի զեղնազոյն քարի շերտ, որին անուանում են Ամդահա-ըռուռուն (պիշապի ոլորք կամ քիթ) և որի մասին պատմում են, թէ մի վիշտայ է եղել, այդանդ, յայտնի չէ թէ ում անէծքով, քարացել է Սրա հանգէպ կայ մի փոքրիկ ձորակ, ընկուղի հիւսաւորց ծառերով զարդարուած, ինչպէս և ժայռից բղկան մի ազրիւր: Այս ձորը կոչում է Քէշիշ-բաղի, (քահանայի այզի), և պատմում է, թէ զրա տէր քահանան չափազանց քաջ է եղել, երկար կուտել է այդ վիշտայի հետ և նրան քարացրել:

ապահովության կ մեր կույտ և մասնաւունք գոյն
առջևական մեջք մաս կանու ։ ապահովության համբ պարզաբանաց
ըստու ։ ինչպես այսու առաջ ուղարկ պահանջական ու առաջ
ապահության գործադրության համբ և գործադրության մաս շատ
բարձ պահանջական է առաջ ուղարկ պահանջ պահանջական
թափ առաջ պահանջական պահանջ առաջ պահանջ առաջ պահանջ
և առաջ պահանջ առաջ ։ Տա առաջ պահանջ պահանջ պահանջական
պահ առաջ պահանջական պահ ։ Տա առաջ պահանջ պահ առաջ պահ
և առաջ պահանջ առաջ ։ Տա առաջ պահանջ պահանջ պահ առաջ պահ

